ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__2434-Ա___ « 01 » հուլիսի 2024 թ.

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.21/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 54.8ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ 64.98ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ա/Ձ Սյուզաննա Ստեփանյանի լիազորված անձ Վարշամ Ավետիսյանի դիմումը՝ Թումանյան փողոցի հ.21/7 հասցեում գտնվող 54.8քմ մակերեսով տարածքի համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու, կից տարածքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.25052023-01-0079 /գաղտնաբառ՝ XR1N41Q-4UWAA/ վկայականը /հողամաս՝ 0.01728հա, շինություն՝ 186.06քմ/, «Եռանկյունի-333» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շինության հատակագիծը և «Աբիտ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2023թ. ներկայացված գնահատման հ.269 հաշվետվությունը, համաձայն որի Թումանյան փողոցի հ.21/7 հասցեում գտնվող 119.78քմ /54.8քմ +64.98քմ/ մակերեսով տարածքի շուկայական ամսական վարձավճարը կազմում է 613 800 /վեց հարյուր տասներեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

Երևանի քաղաքապետի 08.07.2019թ. հ.2390-Ա որոշմամբ /հավելված հ.2/ Երևան համայնքին պատկանող, Թումանյան փողոցի հ.21/7 հասցեում գտնվող 54.8քմ մակերեսով տարածքը՝ վարձակալության իրավունքով մինչև 08.02.2022թ. ժամկետով տրամադրվել է Ա/Ձ Սյուզաննա Ստեփանյանին, 15.07.2019 թվականին կնքվել է ոչ բնակելի տարածքի հ.8533 պայմանագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18072019-01-0459 վկայական, գաղտնաբառ՝ LEWDZMT77FAZ):

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.914-Ա որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման 34-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով, հաշվի առնելով «Անահիտ Մնացականյան» ԱՁ-ի կողմից 18.02.2024թ. տրամադրված եզրակացությունը և իրավաբանական վարչության 25.09.2023թ. հ.Ն/41179-23 դիրքորոշումը.

1. Թումանյան փողոցի հ.21/7 հասցեում գտնվող, Ա/Ձ Սյուզաննա Ստեփանյանին վարձակալության իրավունքով տրամադրված 54.8քմ մակերեսով տարածքին կից գտնվող 64.98քմ մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով տրամադրել Ա/Ձ Սյուզաննա Ստեփանյանին՝ մինչև 01.06.2027թ. ժամկետով:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից Ա/Ձ Սյուզաննա Ստեփանյանի հետ կնքել համաձայնագիր՝ Թումանյան փողոցի հ.21/7 հասցեում գտնվող 54.8քմ մակերեսով տարածքի համար 2019 թվականի հուլիսի 15-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.8533 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու և դրանում փոփոխություններ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրում հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետում՝ «54.8քմ» բառերը փոխարինել «119.78քմ» բառերով.

2) պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետում՝ «08.07.2022թ.» բառերը փոխարինել «01.06.2027թ.» բառերով.

3) պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.3 Գույքը ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից 25.05.2023թ. տրված հ.25052023-01-0079 իրավունքի պետական գրանցման վկայականի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին».

4) պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետում՝ «215 000 (երկու հարյուր տասնհինգ հազար)» բառերը փոխարինել «613 800 (վեց հարյուր տասներեք հազար ութ հարյուր)» բառերով:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետում նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պետական գրանցման, պայմանագրի նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են վարձակալի կողմից.

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ